

Մերքել հանդիսացաւ գերմանացի առաջին վարչապետը, որ կ'այցելէ Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիր

Օգոստոս 24-ին պաշտօնական այցելութեամբ Հայաստան ժամանած Գերմանիոյ վարչապետ Անժելա Մերքել Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ յարգանքի տուրք մատուցեց Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին: Մերքելին կ'ուղեկցէր Հայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեան:

Նշենք, որ 2016-ի Յունիս 2-ին, Գերմանիոյ խորհրդարանը վաւերացուց Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը: «Մենք կը գիտակցինք, թէ 1915-ին ի՛նչ սարսափելի իրադարձութիւն տեղի ունեցած է Հայ ժողովուրդին հանդէպ: Այս փաստը պէտք է մոռցուի, եւ մենք մեր ներդրումը պէտք է ունենանք՝ այս յիշողութեան պահպանման մէջ», ըսաւ Մերքել:

Մերքել օդակայանին մէջ դիմաւորուած էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ: Երկու վարչապետներուն միջեւ աւելի ուշ տեղի ունեցած հանդիպումէն ետք տրուած միացեալ մամլոյ ասուլիսին, Մերքել անդրադարձաւ Արցախի հակամարտութեան կարգաւորման հարցին՝ ըսելով, որ Գերմանիա պատրաստ է ջանքեր ներդնելու հակամարտութեան իրազարկ կարգաւորման համար:



Թորոնթոյի մէջ կայացաւ ՀՅԴ ԳԵՄ-ի 46-րդ Պատգամաւորական ժողովը

25-26 Օգոստոս 2018-ին, Թորոնթոյի հայ կեդրոնէն ներս տեղի ունեցաւ ՀՅԴ ԳԵՄ-ի 46-րդ Պատգամաւորական ժողովը: Ժողովին ներկայ էին Գանատայի տարբեր շրջաններէն եկած 32 պամբաւորներ, որոնք կը ներկայացնէին իրենց մասնաճիւղերը՝ «Լեւոն Շանթ եւ Բեկոր Աշոտ»՝ Մոնթրէլ եւ Լաւալ, «Արամ Մանուկեան»՝ Գեմպրի, «Արշաւիր Շիրակեան»՝ Վանգուվըր եւ «Սիմոն Զաւարեան»՝ Թորոնթո: Ժողովին ներկայ էր ՀՅԴ Գանատայի ԿԿ-ի ԳԵՄ-ի ներկայացուցիչ ընկ. Արա Քրճիքեան: Հիւրաբար իրենց մասնակցութիւնը կը բերէին նաեւ՝ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ մարմնի, ՀԵԴ Արեւելեան ու Արեւմտեան Ամերիկայի շրջաններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Վանաձորի ամառնային ճամբարի տնօրէնուհին:

Ժողովին ընթացքին, անդամները բազմակողմանի քննարկութիւններ կատարեցին եւ արժեւորեցին միութեան անցնող տարեշրջանի աշխատանքներն ու իրավիճակը: Անոնք նաեւ մշակեցին միութեան ապագայի ծրագիրներն ու նպատակները:

Ժողովի օրակարգի գլխաւոր նիւթերն էին ԳԵՄ-ի կազմակերպական առաւել աշխուժացումը, Վանաձորի ամառնային ճամբարն ու այս տարի իրականացած Սպիտակի ճամբարը, «Արծիւ» պաշտօնաթերթի հրատարակութեան շարունակականութիւնն ու տարածումը, Հայ Դատի գծով ԳԵՄ-ի քաղաքական գործունէութիւնն ու դաստիարակչական ծրագիրները:

Ժողովը յատուկ կերպով կարեւորեց ՀՅԴ ԳԵՄ-ի հայաստանեան ամառնային ճամբարներու ծրագրի ընդլայնումը: Հիմնուելով անցնող 8 տարիներու փորձին վրայ,



որոնց ընթացքին ԳԵՄ-ականները Վանաձոր քաղաքին մէջ դաստիարակչական ճամբար իրականացուցած են, որոշուեցաւ աւելի մեծ թափով շարունակել գործը եւ Սպիտակի ճամբարն ալ դարձնել տարեկան ծրագիր: Այս ճամբարները հարիւրաւոր վանաձորցի երեխաներու ծառայած են արդէն: Իսկ այս տարուան նոր կազմակերպուած Սպիտակի ճամբարին մասնակցած են 125 պատանիներ:

Երկօրեայ նիստերուն աւարտին, ժողովը ընտրեց 2018-2019 տարեշրջանի ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան նոր կազմը:

2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevoak Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416.755.5084), www.arzfinefoods.com

«ԱՐՄԷՆՊՐԷՍ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ

«ՀՀ-Սփիւռք գործակցութեան պատմութեան մէջ առաջին անգամ Սփիւռքից փող չենք խնդրում՝ ցանկանալով հիմք դնել նոր որակի փոխադարձ գործակցութեան»

Թաւշեայ յեղափոխութեան արդիւնքում ձեւաւորուած կառավարութիւնն առաջ է բերել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների նոր տրամաբանութիւն ու օրակարգ:

Հանրապետութիւնում եւ Սփիւռքում նոր ուղղակի տրամադրութիւններ են տիրում, մեծացել են սպասումները, եւ այս ամէնը պէտք է վերածել շոշափելի արդիւնքի:

Այս մասին «Արմէնպրէս»ի հետ զրոյցում նշել է ՀՀ սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանը՝ անդրադառնալով Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններին, նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերին:

«ԱՐՄԷՆՊՐԷՍ».- Արդէն շուրջ 3 ամիս է՝ սփիւռքի նախարարի պաշտօնում է՛ք: Պաշտօնավարման առաջին օրերին խօսել էք ծրագրերի ծախսերի արդիւնաւետութեան մասին: Այդ համատեքստում որոշակի փոփոխութիւններ եղան: Այսօր ի՞նչ արդիւնքների մասին կարող էք խօսել:

Մխիթար Հայրապետեան.- Ծախսերի առումով ամենամեծ ձեռքբերումը, կարծում եմ, մասնաւոր կազմակերպութիւնների հետ համագործակցութեան մեկնարկն էր: Ընդհանրապէս, հակուած եմ կարծելու, որ վստահութեան, առողջ գործակցութեան հիման վրայ պետութեան եւ մասնաւոր հատուածի արդիւնաւետ համագործակցութիւնը պէտք է իրականութիւն դառնայ:

Համատեղ գործակցութեան շնորհիւ «Արի տուն» ծրագրի անցումային փուլն իրականացնելու համար մեզ միացան մի շարք մասնաւոր ընկերութիւններ՝ արագ սննդի սպասարկման կազմակերպութիւններ, ռեստորան, բնական հիւթերի գործարան եւ այլն:

«Քայլ դէպի տուն» ծրագիրը լաւագոյնս կազմակերպելու եւ իրականացնելու համար մենք սկսեցինք համագործակցել «Դասաւանդի» Հայաստան» եւ «Դէպի Հայք» կրթական կազմակերպութիւնների հետ: Վերջիններիս ջանքերով մշակուել է ծրագրի կրթական մասը, իսկ համագործակցութեան յուշագիր կնքեցինք Հայ-ռուսական (սլաւոնական) համալսարանի հետ, որն անվճար հիմունքներով տրամադրում է անհրաժեշտ քանակութեամբ լսարաններ, պապական դասընթացների համար նախատեսուած պայմանները: Կրթական գործընթացը ղեկավարում են «Դասաւանդի» Հայաստան» եւ «Դէպի Հայք» կազմակերպութիւնների մասնագէտներն ու ուսուցիչները:

Նախարարութեան «Ներուժ» ծրագիրը եւս օր օրի ընդլայնում է աշակերտների թիւը: Այս կազմակերպութիւնների հետ համագործակցութեան շնորհիւ պետութիւնը նախ միլիոնաւոր դրամներ է խնայում, եւ, որ ակնի կարեւոր է, մենք սրանով նոր որակի, փոխվստահութեան վրայ հիմնուած համագործակցութեան նոր մշակույթի հիմք ենք դնում:

«ԱՐՄԷՆՊՐԷՍ».- Դուք պաշտօնավարման առաջին իսկ օրերից ասել էք, որ հայրենադարձութիւնը լինելու է առաջնահերթութիւններից մէկը: Այս ուղղութեամբ ի՞նչ ծրագրեր են նախատեսուած:

Մխիթար Հայրապետեան.- Թաւշեայ յեղափոխութեան արդիւնքում ձեւաւորուած կառավարութիւնը առաջ է բերել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների նոր տրամաբանութիւն ու օրակարգ: Հանրապետութիւնում եւ Սփիւռքում նոր ուղղակի տրամադրութիւններ են տիրում, մեծացել են սպասումները: Իհարկէ, այս ամէնը պէտք է վերածել շոշափելի արդիւնքի: Յեղափոխութիւնից յետոյ մեր հարիւրաւոր հայրենակիցներ վերադարձել են հայրենիք բնակութեան կամ նախապատրաստում են իրենց վերադարձը, հետաքրքր-



ուած են Հայաստանի ամէնօրեայ կեանքով, զանգահարում են, այցելում ու նամակներ գրում մեզ: Կառավարութեան ծրագրում եւս յստակ նշուած է, որ հայրենադարձութիւնը Հայաստանի Հանրապետութեան սոցիալ-տնտեսական զարգացման, ժողովրդագրութեան, անվտանգութեան բարելաւման եւ այլ գործընթացների համար կարեւոր նախապայման է:

Սփիւռքի նախարարութիւնը հայրենադարձութեան խթանման ուղղութեամբ իրականացնում է իրականացնում ու ծրագրային աշխատանքներ, այդ թւում՝ Հայաստանի Հանրապետութիւն «Հայրենադարձութեան գործընթացի կազմակերպման ռազմավարութեան» մշակումը, կազմուել եւ համալրում է ՀՀում հաստատուած հայրենադարձների տուեալների բազան (Repatriation-ի տուեալները եւս օգտագործուած են), որը կիրառելի է նախարարութեան աշխատանքները կազմակերպելու եւ հայրենադարձների ինտեգրման (համարման-նմբ.) գործընթացն ուսումնասիրելու: Ուսումնասիրում է պետութիւն-Սփիւռք կապերի, հայրենադարձութեան գործընթացի կազմակերպման եւ հայրենադարձների ինտեգրման ծրագրերի վերաբերեալ միջազգային փորձը: Անշուշտ, նախարարութեան կողմից այս տարի իրականացուող «Քայլ դէպի տուն» եւ «Ներուժ» ծրագրերն անմիջականօրէն կապ ունեն հայրենադարձութեան խթանման հետ:

«ԱՐՄԷՆՊՐԷՍ».- Տարիներ շարունակ խօսուած է այն մասին, որ Հայաստանի հասարակական, բազմակարգ կեանքում Սփիւռքի ներգրաւուածութիւնը մեծացուել է, եւ չլինի այնպիսի իրավիճակ, որ Սփիւռքը Հայաստանին, Արցախին միայն ֆինանսական աջակցութիւն ցուցաբերի: Ըստ ձեզ՝ ի՞նչ անելիքներ կան այս ուղղութեամբ:

Մխիթար Հայրապետեան.- Այս հարցը շատ կարեւոր ու բազմաշերտ է: Հայ համայնքի ներկայացուցիչների հետ տարբեր հանդիպումների ընթացքում պարբերաբար նշում եմ, որ Հայաստան-Սփիւռք գործակցութեան պատմութեան մէջ թերեւս առաջին անգամ մենք Սփիւռքից փող չենք խնդրում՝ ցանկանալով հիմք դնել նոր որակի փոխադարձ գործակցութեան, համահայկական ներուժի վերահամայն ու նպատակային կիրառման: Տարիներ շարունակ Սփիւռքը հաստատուն կանգնել է հայրենիքի կողքին, եւ հիմա ժամանակն է, որ մենք էլ կարողանանք անել համարժէքը: Հայաստանեան հասարակական, քաղաքական, մշակութային կեանքում Սփիւռքի ներգրաւուածութեան բարձրացումը

մը կարեւոր է ոչ միայն հայրենադարձութեան գործընթացի խթանման առումով, այլեւ, ինչպէս նշեցի, փոխգործակցութեան ամրապնդման, փոխճանաչութեան տեսանկիւնից:

ՀՀ կառավարման ոլորտում համահայկական մասնագիտական ներուժի ներգրաւման անհրաժեշտութիւնից ելնելով՝ վարչապետի յանձնարարութեամբ Սփիւռքի նախարարութիւնը միւս գերատեսչութիւններից տեղեկատուութիւն է հաւաքում՝ համապատասխան ոլորտներում այս պահին պահանջուող մասնագէտների վերաբերեալ:

Հայրենիքում Սփիւռքի ներգրաւուածութեան լաւ ազդակ են նաեւ նախարարութեան երիտասարդական ծրագրերը: «Քայլ դէպի տուն» ծրագրին հիւրընկալուել են մօտ 440 երիտասարդներ ու պատանիներ 25 երկրից: Նրանք երկու շաբաթ շարունակ լինելու են Հայաստանում, շրջելու են, բարելաւելու հայրենի, հայոց պատմութեան վերաբերեալ իրենց գիտելիքները, նորից գալու, այստեղ սովորելու մասին մտորումներ են ունենալու: Նրանք նաեւ զգալու են, որ Հայաստանը լոկալ յուզական տարածք չէ, այլ ժամանակակից պետութիւն է՝ լայն հնարաւորութիւններով, որտեղ կարելի է լաւ ապագայ ու բարեկեցիկ ներկայ ունենալ:

«ԱՐՄԷՆՊՐԷՍ».- Պարոն նախարար, այս ընթացքում նախարարութիւնը, եղած ծրագրերը վերականգնելուց բացի, նոր ծրագրի կեանքի կոչեց, մասնաւորապէս՝ «Ներուժ» ստարթափ ծրագիրը: Ի՞նչ ակնկալիքներ կան այս ծրագրից, եւ արդէն կա՞ն արձագանգներ:

Մխիթար Հայրապետեան.- «Ներուժ»ը մեր ամենալաւակնոտ ու հեռանկարային ծրագրերից մէկն է: Այժմ փորձում ենք ծրագրի վերաբերեալ տեղեկատուութիւնը հասցնել բոլոր հայկական համայնքներին, իւրաքանչիւր սփիւռքահայ երիտասարդի: Ինչպէս գիտէք, յաղթող ծրագրերը կը ստանան մինչեւ 15 մլն. դրամ աջակցութիւն, մասնագիտական խորհրդատուութիւն, աշխատելու համար նախատեսուած տարածք, մէկ տարի ազատուած կը լինեն Հայաստանում կացութեան վճարից: Այս ամէնը կը ֆինանսաւորուի յատուկ գրամաշնորհային բիւջէից, որը կը ձեւաւորուի ե՛ւ նախարարութեան ֆինանսական միջոցների հաշուին, ե՛ւ տարբեր կառույցների, կազմակերպութիւնների, անհատների հետ համագործակցութեան արդիւնքում:

«Ներուժ»ի նպատակն է ոչ միայն Սփիւռքի հայագրի ձեռներէցների համար հնարաւորութիւն ստեղծել ստարտափները բերելու Հայաստան եւ բարելաւելու երկրում ստարտափների էկոհամակարգը (կենսոլորտի համակարգը-նմբ.), այլեւ ինչպէս նշեցի, հեռահար նպատակ ունենք որոշ չափով լուծելու Սփիւռքի մասնագիտական ներուժի հայրենադարձման խնդիրը: Քիչ առաջ խօսում էինք հայաստանեան կեանքում Սփիւռքի ներգրաւուածութեան մասին, եւ վստահաբար կարող եմ ասել, որ այս ծրագրով լուծում ենք նաեւ հայրենիքում Սփիւռքի տնտեսական ներգրաւուածութեան հարցը: Այսօր արդէն ստացել ենք մասնակցութեան 30ից ակնի յայտ:

«ԱՐՄԷՆՊՐԷՍ».- Առաջիկայում, արդեօք, նախատեսուած են նոր ծրագրեր:

Մխիթար Հայրապետեան.- Ընթացիկ միջոցառումներ, բնականաբար, կը լինեն: Վերոնշեալ ծրագրերից բացի, նոր խոշոր ծրագիր դեռեւս չունենք: Ամէն օր ծնւում են նոր մտքեր, նոր գաղափարներ, ստանում ենք բազում առաջարկներ, որոնց հիման վրայ յետագայում կը կազմուեն ծրագրեր, սակայն դրանց մասին խօսելը դեռեւս վաղ է համարում:

Համացացանցի վրայ
Երկիր Մետայի
«Երկիրն այսօր»
Ծրագրի լուրերը
համակարգչային
պատկերասփռումով
դիտելու համար
այցելեցէ՛ք
www.yerkirtv.org

Թրոնթոյի «ՆՈՐ ԶԱՅ ԶՈՐԻՉՈՆ»
յատագիրը կարելի է դիտել -
Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
Զինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00
OMNI 1 կայանէն:

Հեղնար Զեյթունի Ուաթընիայի «Պակտոլ Էջերը» գիրքը կը պատմէ Զեյթունի Աւետարանին ողբասկանը



Շուտով լոյս կը տեսնէ Գալիֆորնիոյ համալսարանի մշակոյթի պատմութեան մասնագէտ-գասարիստ Հեղնար Զեյթունի Ուաթընիայի «The missing pages. The modern life of a medieval manuscript from Genocide to justice» («Պակտոլ Էջերը. Միջնադարեան ձեռագրի մը արդի կեանքը՝ Ցեղասպանութենէն մինչև արդարութիւն») գիրքը, որ կը վերաբերի Զեյթունի Աւետարանին կորսուած 8 էջերուն:

Զեյթունի Աւետարանը 1256 թուականին ընդօրինակուած է Հռոմիլայի մէջ: Զայն գրած ու նկարագրուած է 13-րդ դարու լուսաւորիչ եւ մանրանկարիչ Թորոս Ռոսլին՝ կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցիի պատուէրով: Աւետարանը կը նկատուի հայկական մանրանկարչութեան գլուխ գործոցներէն մէկը: Ան նկարագրուած է խորաններով, աւետարանիչներու պատկերներով, լուսանցազարդերով եւ զարդագիրերով:

Աւետարանը դարեր շարունակ պահուած է Զեյթունի աննշան եկեղեցիներէն մէկուն մէջ մինչև 1915-ի Հայոց ցեղասպանութիւն: Գաղթականներուն հետ երկար ճամբայ կտրած, երկուքի բաժնուած է: Ապա տարիներ ետք մատենաբան հասած է Հայաստան եւ տեղ գտած՝ Երեւանի «Մետրոպ Մաշտոց» Մատենադարանին մէջ: Այս միջոցին սակայն անկէ 8 էջեր կորսուած են:

Լոս Անճելըսի Կէթի Թանգարանին մէջ յայտնուած են այդ 8 կորսուած էջերը, 1994-ին, երբ Թանգարանը գնած է գանոնք ցեղասպանութենէն վերապրած ամերիկահայ ժառանգորդներէ: Հայ եկեղեցին դատի տուած էր Կէթի Թանգարանը, պնդելով թէ ի՛նքն է օրինական սեփականատէրը այդ էջերուն: Իրաւական երկար պայքարը կ'աւարտի փոխգիծմամբ, երբ Կէթի Թանգարանը կ'ընդունի Հայոց եկեղեցւոյ օրինական սեփականատիրութիւնը, մինչ Հայոց եկեղեցին որոշում կը կայացնէ մշակութային այդ հարուստ պատառիկները նուիրելու Թանգարանին:

Հեղնար Զեյթունի Ուաթընիայ վերոնշեալ գիրքով ուսումնասիրած է Զեյթունի Աւետարանի ամբողջ ողբասկանը, Զեյթունի եկեղեցիէն մինչև Հալէպի գաղթականները, էլիս կղզի, Խորհրդային Հայաստան, ապա Լոս Անճելըսի դատարանները: Ան կը նշէ, թէ մշակոյթի Թանգարանը պատառիկներուն պատմութիւնը կ'արտացոլացնէ ցեղասպանութիւն ապրած, գոյապայքար մղած ու վերապրած հայ ժողովուրդին պատմութիւնը:

Գիրքին հրատարակումը նախատեսուած է Փետրուար 2019-ին: Նշենք, որ Հեղնար Զեյթունի նաեւ հեղինակն է «The Image of an Ottoman City: Architecture in Aleppo» («Օսմանական քաղաքի մը պատկերը. Հալէպի ճարտարապետութիւնը», 2004) գիրքին: Անոր գրութիւնները յաճախ լոյս կը տեսնեն «Huffington Post»-ի եւ «Los Angeles Times»-ի մէջ:

ՍՈՆԱ ԹԻԹԻԶԵԱՆ

Սուրիոյ նախագահի հրամանով Հալէպի մէջ վարժարան մը կը վերանուանուի սուրիահայ նախագահի գինուորի անուամբ



Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հրամանով Հալէպի «Դամասկոս» նախակրթարանը կը վերանուանուի սուրիահայ նահատակ գինուոր Գրիգոր Աշնաքլեանի անուամբ, 5 Օգոստոս 2018-ին:

Նշենք, որ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ եւ առաջին տիկին Ասմա Ասատ, նահատակներու ծնողներու հետ իրենց կատարած հանդիպումներու ծիրէն ներս, երկու տարբեր առիթներով հանդիպում ունեցած էին Սուրիոյ բանակին մէջ ծառայած եւ Հալէպի Ալ-Նիլ թաղամասին մէջ մարտական հերթապահութեան ընթացքին, 16 Ապրիլ 2014-ին նահատակուած Գրիգոր Աշնաքլեանի ծնողքին հետ: Այդ հանդիպումներուն սուրիահայ նահատակին ծնողքը խնդրած էր, որ կրթական հաստատութիւն մը կամ հիւանդանոց մը անուանակոչուի Գրիգորի անունով, անմահացնելու համար անոր յիշատակը:

Ընդառաջելով ծնողքին խնդրանքին, նախագահը յատուկ հրամանագիրով մը Հալէպի հայաշատ Միւլէյմանիէ թաղամասին մէջ գտնուող «Դամասկոս» նախակրթարանը վերանուանեց «Նահատակ Գրիգոր Վարուժանի Աշնաքլեան» վարժարան, նկատի առնելով անոր մօր այդ դպրոց յաճախած ըլլալն ու պատերազմի դժուար օրերուն, իր գինուորական ծառայութեան ընթացքին Գրիգորի այդ դպրոցի ուսուցչական կազմին հաց մատակարարելը: Անուանակոչման արարողութեան ներկայ գտնուած են Հալէպի կրթական տնօրէնը, վարժարանի տնօրէնութիւնն ու նահատակին ծնողքը:

Նշենք, որ Գրիգոր Աշնաքլեան եղած է նաեւ ՀՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի սկաւառ:

Ghadir Meat & Restaurant
 Ghadir
 T. 416-750-7404
 T. 416-750-7400
 1848 Lawrence Avenue E.
 Scarborough, ON M1R 2Y4
 E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS
 OPEN 7 DAYS A WEEK!
 WEDNESDAY 9am - 7pm
 SATURDAY 8AM - 4PM
 SUNDAY 8AM - 3PM
LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
 ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
 Gourmet Mediterranean Cuisine
 1 High Meadow Place, Unit 9
 Toronto, Ontario M9L 2Z5
 Tel 416 745 3111
 Fax 416 745 9337

ANI Restaurant
 905.761.6484
 1450 Clark Ave. West,
 Thornhill ON L4J 7R5

Sutton
 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
 Sales Representative
 Direct: (416) 918-3615
 Office: (416) 739-7200
 Fax: (416) 739-9367
 annievarbed@icloud.com
 www.suttongroupadmiral.com

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
 andre@HearingAidSource.ca
 416 754 4327 (HEAR)
 Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
 Fine Middle Eastern Pastries
 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
 Toronto ON, M1R 2Z5
 Tel 647.351.2015
 www.crownpastriesbaklava.com

I.D.A.
 Part of the **Boyer** family of pharmacies.
 Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
Cassandra Pharmacy Inc.
 2040 Victoria Park Ave.
 Toronto, Ontario
 M1R 1V2
 Tel. : **416.449.2040**
 Fax: **416.449.2048**

ANI BAKERY
 ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
 25 Howden Road, Unit #2
 Scarborough, Ontario M1R 3C8
 Tel: 416.285.7164

ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի սկաւտական անդրանիկ բանակումը

ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի սկաւտական բաժնի կազմաւորումէն ընդամենը մէկ տարի ետք, տեղի ունեցաւ մասնաճիւղի անդրանիկ բանակումը 18 եւ 19 Օգոստոս 2018-ին: Սոյն բանակումը նուիրուած էր ՀՄԸՄ-ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանին, նկատի ունենալով որ այս տարի կը տօնենք ՀՄԸՄ-ի հիմնադրման 100-ամեակը:

Երկօրեայ բանակումը տեղի ունեցաւ Լաւալի Հայ կեդրոնէն ներս, Շաբաթ, 18 Օգոստոս, առաւօտեան ժամը 7-ին: 91 մասնակից քոյրեր եւ եղբայրներ բաժնուեցան եօթը խմբակներու՝ Պալու, Պաղիրա, Ռաքչա, Մոկլի, Քաա, Առիւծ եւ Արծիւ: Սկսուեցան մեծ խանդավառութեամբ հաւաքուած էին՝ կատարելու բացումը իրենց առաջին բանակումին, որ իր կարգին, որպէս պատմական պահ, դրոշմուեցաւ իրենց մտքերուն մէջ:

Շաբաթ օրուան օրակարգը կ'ընդգրկէր մարզանք, ձեռային աշխատանքային խաղեր, դաստիարակչական բաժին, ինչպէս նաեւ ազգային եւ ՀՄԸՄ-ի վերաբերող նիւթերու մասին դասախօսութիւններ եւ յաջորդ օրը տեղի ունենալիք խարուկահանդէսի փորձեր:

Երկու օրերուն ընթացքին սկաւտները ունեցան թէ՛ հիւր եւ թէ՛ պատասխանատու դասախօսներ, որոնք արծարծեցին սկաւտը հետաքրքրող նիւթեր, ասոնց կողքին անոնք սորվեցան նաեւ նոր երգեր ու կանչեր: Այս բոլորին միջոցաւ անոնք գիտակցեցան, որ սկաւտ ըլլալը սոսկ հաճելի եւ խաղով լեցուն ժամանց մը չէ, այլ՝ պատասխանատուութեան, ազգասիրութեան եւ եղբայրասիրութեան դարձիկն է:

Շաբաթ գիշեր հաճելի խրախօսումներ մը ետք, ժամը 10-ին սկաւտները ան-

ցան քնանալու: Արի-Արեւուշ խմբակին տրուած էր պահակութեան պարտականութիւնը, որոնք մեծ ուրախութեամբ եւ հրճուածքով կանգնած էին պաշտպանելու բանակավայրը, իրենց մտքին ունեւալով «Սկաւտը մի՛շտ պատրաստ» կարգախօսը:

Կիրակի առաւօտեան զարթունքը եղաւ ժամը 6:30-ին: Օրակարգին հետեւելով, անոնք շարժեցան դէպի շրջաբակ, ուր մարզանքով աշխուժացան ու պատրաստուեցան երկրորդ եւ վերջին օրուան գործունէութեան: Գայլ-արծուիկ, արի-արեւուշ եւ պատասխանատու խմբակներ ուղղուեցան դէպի մօտակայ խաղավայր մը՝ Parc des priairies, ուր հաճելի ժամանակ անցուցին պատասխանատուներուն պատրաստած խաղերով:

Կիրակի երեկոյեան սկաւտներն ու պատասխանատուները համախմբուած անհամբեր կը սպասէին խարուկահանդէսին:

Խարուկահանդէսը տեղի ունեցաւ Լաւալի Հայ կեդրոնի շրջաբակէն ներս, երեկոյեան ժամը 7-ին: Բանակող քոյրերն ու եղբայրները սողանցքով եւ «Յառաջ նահատակ» քայլերով կատարեցին խարուկահանդէսին բացումը: Բացման խօսքը կատարեց ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի Սկաւտ խորհուրդի ատենապետ եղբայր Լեւոն Իսկէնտէրեանը:

Յատագիրը կ'ընդգրկէր պար, ասմունք եւ նուազ՝ ջութակի ընկերակցութեամբ, բուրգ, չափական մարզանք եւ այլն:

Մասնաճիւղի ընդհանուր պատասխանատու քոյր Զապէլ Թորոսեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք անվարան իրենց զաւակները վստահեցան ՀՄԸՄ-ի մեծ



ընտանիքին: Խարուկահանդէսի ընթացքին տեղի ունեցաւ պաշտօնի տուէնթիւն. քոյր Զապէլ Թորոսեան մասնաճիւղի խմբապետութեան պաշտօնը ստացաւ ձեռամբ Գանատայի Շրջանային խմբապետուհի Քոյր Սօսէ Պէօճիքեանի, արարողութեան ընթացքին բեմ հրաւիրուեցաւ նաեւ Շրջանային վարչութեան անդամ, Լաւալի ներկայացուցիչ եղբայր Պերճ Աթոյիկեան: Իր կարգին, քոյր Զապէլը իր նախկին պաշտօնը՝ Գայլ-արծուիկ միւսուրի պատասխանատուութեան պաշտօնը, յանձնեց քոյր Նրանի Նաճարեանին:

Ընթացքին յաջորդաբար խօսք առին ՀՄԸՄ-ի Շրջանային Խորհուրդի ատենապետ եւ Լաւալի ներկայացուցիչ եղբայր Ալեքսան Գույումեան, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային խմբապետուհի քոյր Սօսէ Պէօճիքեան, 48-րդ մարզախաղերու յանձնախումբի ատենապետ եղբայր Հրաչ Տէր Սարգսեան եւ ՀՄԸՄ-

ի Վարչութեան ատենապետուհի քոյր Սոնա Լախոյեան:

Քոյր Սոնան իր խօսքին մէջ խրատուեցաւ Հայ սկաւտները ըսաւ. «ՀՄԸՄ-ը, ինչպէս մեզի, այնպէս ալ ձեզի պիտի տայ քաջութիւն, ինքնավստահութիւն եւ փայլուն ապագայ»:

Յայտագիրը իր աւարտին հասաւ «Ով հայ արի» քայլերով եւ փակուեցաւ Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Վարդան Վրդ. Թաշճեանի «Պահպանիչ»-ով:

Երկօրեայ բանակումին ընթացքին, սկաւտները կը ճաշակէին մասնաճիւղիս Ընկերային յանձնախումբին պատրաստած համեղ ճաշերը: Իսկ աւարտին, ծնողները հիւրասիրուեցան նոյնպէս Ընկերային յանձնախումբին պատրաստած հատիկով:

Քոյր Ծղղիկ Սաֆար

Գանատայի Հայոց թեմի Կիրակօրեայ դպրոցներու միօրեայ սեմինար-աշխատանք



Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին, տեղի ունեցաւ Կիրակօրեայ դպրոցներուն միօրեայ սեմինար-աշխատանքը, Շաբաթ, 25 Օգոստոս 2018-ին, Քինկսթրի մէջ:

Սեմինարին բացումը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ ողջունեց ներկաները իրենց մասնակցութեան համար եւ գնահատեց բոլորին նուիրումը հայ եկեղեցւոյ եւ ծառայութիւնը ազգին:

Քրիստոնէական Դաստիարակութեան խորհուրդին կողմէ տիկին Թալին Պողոսեան կատարեց ծանօթացման բաժինը, որուն յաջորդեց աշխատանքն ու խորհրդածութիւնը՝ տիկին Սեմալին Պէքարեանի կողմէ: Ան ընդհանրապէս կեդրոնացաւ Աստուածաշնչային առակներու վրայ եւ անոնց ուսուցման ձեւին ու կերպին մասին, որոնք արմատ կը նետեն մանուկներուն եւ պատանիներուն կեանքին մէջ:

Սեմինարի աւարտին, Բաբգէն Արքեպիսկոպոս մասնակից ուսուցիչներուն եւ տնօրէններուն ըսաւ, թէ շնորհ պէտք է գնենք դաստիարակութեան վրայ: Կիրակօրեան այն վայրն է, ուր ընտանիք, եկեղեցի եւ դպրոց իրարու կը հանդիպին, եւ մանուկը ճշմարիտ հաւատքով կ'ապրի, կ'աճի ու կը հարստանայ:

Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ նաեւ Կիրակօրեայ Դպրոցներու կարեւորութեան, դերակատարութեան եւ անհրաժեշտութեան: Ան մեծապէս գնահատեց կամաւոր ուսուցիչներն ու տնօրէնները, որոնք միայն բարին կը սերմանեն մեր մանուկներուն հոգիներուն եւ սրտերուն մէջ:



ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՈՆԹՐԵԱՆԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱԿԻՒԴԻ

ՏՕՐՕԹԻ ԼԷՅՆԷԿԵԱՆ ԿԹԱԹՈՇԱԿ

Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը կը տրամադրէ հազար տոլարի (\$ 1000) կրթաթոշակ մը, տրամադրելի այն ուսանողին, որ իր համալսարանական առաջին տարին ամբողջացուցած է Քեպէզ նահանգին մէջ:

Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը հաստատած է կրթաթոշակը ընկի. Տօրօթի Լէյլէկեանի մօր, կէսրոջ եւ քրոջ ընկերուհիներ Նուարդ Աբրահամեանի, Մառա Լէյլէկեանի եւ Էլիզաբէթ Ալթունեանի յիշատակին:


Հիսիսային Ամերիկայի հայկական գաղութներուն մէջ, բարերար ընկի. Տօրօթի Լէյլէկեանի անձնուէր յանձնառութիւնը, աջակցութիւնը եւ առատաձեռնութիւնը միշտ ալ կատարուած են անսակարկ եւ լուսարձակներէ հեռու: Այս արժէքները, ինչպէս նաեւ թեկնածուներուն գործունէութիւնը համայնքէն ներս՝ նկատի պիտի առնուին պարգեւատրեալի ընտրութեան ժամանակ:

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի Տօրօթի Լէյլէկեանի անուն կրթաթոշակը պիտի շնորհուի կրթաթոշակի յանձնախումբի գնահատման, ինչպէս նաեւ ստորեւ նշուած չափանիշներուն հիման վրայ:

1. Թեկնածուն պէտք է ըլլայ ծագումով հայ, գանատաբնակ, գանատահպատակ եւ կամ ընդունուած Գանատա որպէս գաղթական (կցել համապատասխան փաստաթուղթը):
2. Համալսարանի առաջին տարին ամբողջացուցած ըլլալ եւ Քեպէզ նահանգի համալսարաններէն մէկուն մէջ արձանագրուած նուագագոյնը 3 դասընթացներու:
3. Նոյն ընտանիքէն միաժամանակ երկու հոգի չեն կրնար կրթաթոշակին դիմում կատարել, ինչպէս նաեւ՝ ստանալ ՀՕՄ-ի այլ կրթաթոշակ:
4. Թեկնածուն կրնայ ստանալ կրթաթոշակը երկու անգամ, սակայն ոչ յաջորդաբար:

Դիմումագիրը ներկայացնելու ժամկէտը 30 Հոկտեմբերն է, ե-նամակով միայն, ուղղուած հետեւեալ հասցէին arsmontreal@scholarship@gmail.com

Տաճկահայ Գաղթաշարժը - ԻԳ.



Գլուխ Եօթներորդ Գաղթաշարժը և Անոր Հետեւանքները

1918-ի թրքական արշաւանքն եկաւ վերջնականորէն տեղաւորելու ընկելու 150,000-ի հասնող Տաճկահայութիւնը, որ այնքան դժուարութիւններով տեղաւորուած էր Տաճկահայաստանի մէջ. հանդուրժած էր բազմաթիւ զրկանքները, նահանջները եւ ամենօրեայ անպահովութիւնը, եւ կրցած էր նորէն արմատ բռնել հայրենի հողին վրայ:

Սակայն այս անգամուայ նահանջը, իր մեծութեամբ եւ շարժման բնոյթով, ամբողջովին կը տարբերէր նախորդներէն: Ատիկա իրականորէն գաղթաշարժ մըն էր, որ ունեցաւ իր ճակատագրական հետեւանքները:

Նախորդ տարիներու նահանջները տեղի կ'ուենային ռուսական բանակի պատերազմական շարժումներու հետեւանքով: Հայ ժողովուրդը կը հետեւէր նահանջող բանակին, անգէն, ցիրուցան եւ կը դառնար գաղթական: Ռուսաստանի ներկայութիւնը յոյս կը ներշնչէր նորէն վերադառնալու հայրենիք: Քաղաքական հաւանականութիւնները կախուած էին հայկ. Հաւաքական ուժէն: Մինչդեռ, 1918-ին Ռուսաստանը չկար: Հայն ու թուրքը մնացած էին միմեկ, դէմ դէմի: Հայ ժողովուրդը հագիւ թէ երկու ամսուայ զինեալ կեանք ապրած էր, երբ չափուեցաւ թրքական բանակներու հետ եւ պարտուեցաւ: Ռուսաստանի բացակայութիւնը, թուրք-գերմանական յաղորդութիւնները, եւ մեր միջնակութիւնը մտայն հորիզոն մը կը բանային հայ ժողովուրդի առջեւ: Մենք, յուսակուտը, կը հեռանայինք Տաճկահայաստանէն, եւ կը հեռանայինք այն համոզուածով՝ որ երկար ժամանակ այլեւս չպիտի կրնայինք դառնալ հոն:

Տաճկահայութիւնն արմատախիլ՝ կը հեռանար իր հայրենի օճախէն, եւ կ'ուզէր ամէն ինչ աւերակ դարձնել իր ետեւ, թշնամուսն չթողնելու համար: Բոլոր տեսակի պահեստները հրոյ ճարակ եղան: Զինապահեստները պայթեցան: Կարեւոր շէնքերը հրդեհի մատուցեցան: Էրզրումի ճակատի վրայ թերեւս շարք մը պատերազմական հարստութիւններ մնացին անվնաս ու թուրքերուն ձեռք տրուեցան, սակայն, ինչպէս, ինչպէս-Մուշ-Ալաշկերտ գծի եւ Վասպուրականի շրջանի մէջ թուրքերը միայն աւերակներու կոյտերու վրայ եկան իշխելու: Մենք Տաճկահայաստանը բոցավառ հրդեհի ծով մը դարձուցինք եւ մեր ժողովուրդը, երկար շաբաթներու ընթացքին, գիշերուայ գարհուրելի խաւարին մէջ, կը տեսնէր իր հայրենիքի ճարճատուրը: Կը տեղափոխուէր մեր եւ Տաճկաստանի միջեւ դատարկուած անպատ մը, հողային անջրպետ մը, եւ նաեւ՝ հողբեանական անդունդ մը, վերջնական, անվերաքննելի եւ անդարմանելի: Եզրակացութիւնը պարզ էր.- Կամ մենք գոյութիւն պիտի ունենայինք, կամ թուրքերը: Այս երկու ցեղերու միատեղ կենցաղ իր վերջակէտին հասած էր: Թուրքերն այդ վերջակէտը դրած էին 1915-ի ապրիլին: Տաճկահայերն այդ եզրակացութեան հասան 1918-ին, իսկ ռուսահայութիւնն այդ ըմբռնման յանգեցաւ (մասամբ) միայն 1920-ին, երբ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը վտանգուեցաւ:

150,000-էն աւելի տաճկահայ բազմութիւնն այս անգամ կը դիմէր դէպի Կովկաս, առանց յոյս ունենալու թէ կը գտնէ այն գաղթականական օգնութիւնը, ինչ ցոյց տրուած էր նախորդ տարիներու ընթացքին: Այս անգամ, սակայն, հայ ժողովուրդը զինուած էր եւ աւելի կազմակերպուած՝ ներքնապէս: Իւրաքանչիւր նահանգի ժողովուրդը հաւաքական ուժ մը կը ներկայացնէր: Անիկա կը դիմէր գաղթաշարժի եւ կ'որոնէր նոր հայրենիք մը, հոն արմատ ձգելու համար: Իսկ իր գոյութեան պահպանումը կը վստահէր իր զէնքին եւ հաւաքական ուժին:

2.

Գաղթաշարժը տեղի ունեցաւ ապակեզրոնացած ձեւով եւ այդպիսով թուլացաւ անոր տարերային ուժը: Էրզրումի նահանգի ժողովուրդը, բացի Բասէնէն, առանձին հաւաքականութիւն մը չուներ. անաղախ տարրերէ բաղկացած էր եւ այդ նահանգի նախկին ազգաբնակչութիւնը չէր ներկայացնէր: Այս բացասական կողմը աւելի շեշտուեցաւ, շնորհիւ իր նահանջի գծին: Էրզրումէն եւ Բասէնէն նահանջող ժողովուրդն անցաւ Կարս, անկէ Ալէքսանդրապոլ եւ բռնեց Թիֆլիսի երկաթուղադիմը, կամաց կամաց զինաթափուելով: Իսկ Լոռիի ձորն անցնելէն յետոյ, այդ ժողովուրդը դարձաւ անհայրենիք գաղթական բազմութիւն մը, ենթակայ վրացու, թաթարի եւ հիւսիսային լեռնականներու արհամարհանքին եւ թշնամանքին: Այս հոսանքը բազմապատկուած էր Կարսի եւ Ալէքսանդրապոլի թէ տեղացի եւ թէ տաճկահայ փախստական հարիւր հազարաւոր գաղթականներով, որոնք հայրենի սահմաններէն հեռու ինկան, տանջուեցան ու վնասուեցան, բայց իրենց շարժումներով առանձին անդրադարձում մը չուներան Հայաստանի բախտի վրայ:

Վասպուրականի ժողովուրդը երկու թեւերու բաժնուեցաւ: Մէկ խոշոր մասը Գոստի Համբարձումեանի (15), Լ. Շաղոյեանի եւ Բուլգարացի Գրիգորի ղեկավարութեամբ Վանէն դիմեց դէպի Պարսկաստան: Իսկ միւս մասը Գնդ. Տ. Բաղդասարեանի, Հմ. Մանուկեանի, Ասլանի եւ այլոց ղեկավարութեամբ անցաւ Բերկրիի կամուրջը եւ դիմեց դէպի Իգտիր:

Դէպի Պարսկաստան դիմելու երկու գլխաւոր պատճառներ գոյութիւն ունէին: Առաջին դրդապատճառը անգլիական բանակին միանալու հաւանականութիւնն էր: Անգլիացիները Բաղտատէն առաջացած էին Պարսկաստանի ներսերը: Անոնց միանալն ապահով ճակատ մը կազմելու երաշխիքը կուտար, քան վստահիլ փոթորկուած Կովկասին, որ թրքական կրունկներու տակ կ'իյնար: Երկրորդ պատճառը Բերկրիի վախն էր: Վանի առաջին նահանջին, վանեցիները ծանրապէս վնասուած էին եւ աչքերը վախցած էր այդ կերճէն: Այսպիսով, Վասպուրականի ժողովուրդի եւ զինեալ ուժերու մեծամասնութիւնը կը բռնէր երկար ճանապարհ մը, կը հասնէր Բաղտատ, Բասար, ու կ'իյնար Բազուբայի վրաններուն տակ... Երկար պատմութիւն, վերադարձ դէպի անկախ ու կախեալ Հայաստան, եւ սակայն, այդ գաղթաշարժին մասնակցող բազմութեան վերջին բեկորները, հեռաւոր Արաբիոյ մէջ, այս տխուր պատմութեան շարունակութիւնը կը կազմեն տակաւին:

Գաղթաշարժի կեդրոնական հոսանքը, կը սկսէր Խնուս-Մուշի շրջանէն, Մալազկերտէն եւ կը կեդրոնանար Ալաշկերտ: Այս շրջանի մէջ լուրջ ընդհարումներ տեղի ունեցան թաթարական կանգուն մնացած քանի մը գիւղերու հետ, որոնք Ս. Յովհաննու վանքի մօտերը ժողովուրդի ճանապարհը կտրած էին: Զինուած ժողովուրդի ալիքներու տակ կ'ընկճուէին թաթարական եւ քրդական շարք մը գիւղեր եւ առատ պաշար կը թողնէին զօրքին եւ ժողովուրդին:

Կարսի անկումէն յետոյ, ժողովուրդն ու զինեալ ուժերն ամփոփուեցան Դիատիի եւ Մուսուսի շրջանին մէջ, ուրկէ եկան անցան Վասպուրականէն հասնողները: Տակաւին Արարատեան լեռնաշղթան չանցած, Տարօնի եւ Ալաշկերտի ժողովուրդական ղեկավարները, որոնք կը ներկայացնէին այդ շրջաններու զինուորական, վարչական եւ կուսակցական հաստատութիւնները, վերջին խորհրդակցութիւն մ'ունեցան Տաճկահայաստանի վերջին հողաշերտին վրայ, գոյութեան պայքարի ուղեգիծ մը պատրաստելու համար: Այդ ժողովի մէջ որոշուեցաւ ժողովուրդի հետ մնալ եւ ղեկավարել գաղթաշարժը-դառնալ տեսակ մը շարժական կուսակցութիւն, կեդրոնացած պահել զինուորական, կուսակցական եւ վարչական ղեկավարութիւնը եւ ընթացք տալ 50,000-է աւելի ժողովուրդական զանգուածի մը շարժումներուն: Հիմնական որոշում մը.- զէնքի ուժով եւ սեփական կազմակերպութեամբ ապրուստ ճարելու եւ Ֆիզիքական գոյութիւնը պահպանելու մտայնութիւնը,- ընդհանուր սեփականութիւն դարձաւ: Ղեկավարներն անցան իրենց սահմանուած պարտականութեան դուրսը: Զօրքն ու զինուած ժողովուրդը մէկ միութեան մէջ ձուլուեցան: Զինուած ժողովուրդը կազմակերպուած տարերային խոշոր ուժ մը դարձաւ:

Ռուսական Հայաստանի քարտէսը մեր աչքերուն առջեւն ունէինք: Մեր աչքերը կը յառնէինք լեռնամասնու եւ թաթարական շրջաններու վրայ: Հայկական լեռնամասերը մեր ժողովուրդի ապաւէնը պիտի ըլլային եւ մենք բնական ամբողջութիւններէն օգտուելով՝ գոյամարտը պիտի շարունակէինք: Գոյամարտն ապահովելու համար, անհրաժեշտ էր թաթարական ապստամբ շրջանները (որոնք կռնակէն եւ կողքերէն կը հարուածէին հայ ժողովուրդը) առնել զինուած ժողովուրդի ազդեցութեան տակ: Պարզ տրամաբանութիւն մ'ուներ դէպի Արարատեան Հայաստանի դիմում տաճկահայ զինուած զանգուածը:- Անիկա կը մտածէր, եթէ թուրքը բռնի ուժով զինք դուրս կը քշէ իր հինաւուրց հայրենիքէն, ու ինքը Արարատն անցնելէն յետոյ, անհող ու անձաք բազմութիւն մը պիտի դառնայ, իր մարդկային սրբազան իրաւունքն է գրաւել, զէնքի ուժով, թաթարական հողերը եւ բնակիլ հոն, որպէս իր ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ: Այս ուխտով ու վճռականութեամբ Տարօնի, Ալաշկերտի եւ Վասպուրականի ժողովուրդը, ապրիլի վերջերը, Արարատեան բարձունքներէն, ձիւնէ հիւսի մը պէս, վար կ'իջնէ դէպի Սուրմալու: Այս հսկայ բազմութեան հետ երեւակայեցէք հարիւր հազարաւոր մեծ ու փոքր անասուններու հօտեր, բռնած ամբողջ դաշտի լայնութիւնը, ամէն ինչ աւերող մարտիի պէս, ալիք առ ալիք կ'առաջանար:

Այս զանգուածն էր որ մնաց Հայաստանի հանրապետութեան (տակաւին չկազմուած) սահմաններու մէջ: Չափեց երկրի լայնքն ու երկայնքը, գալարուեցաւ վտանգներու ցանցերուն մէջ, արիւնտուեցաւ ու արիւնտուեց, բայց զօրացաւ եւ արմատ ձգեց նորակազմ հայրենիքի հողին խորքը, եւ հայկական դիմադրի տուաւ անոր:

3.

Սուրմալուի թրքութիւնը մեծ մասով ընկճուեցաւ, ու տեղի տուաւ զինուած հայութեան: Ժողովուրդի եւ զինուած ուժերու ալիքը հասած էր Արաքսի ափերը: Թուրքերը Կարսի գրաւումէն յետոյ, իրենց ուժերն ամփոփած՝ կ'առաջանային դէպի Ալէքսանդրապոլ: Անդրանիկ մօտ 1000 հոգիով անցած էր Ալաշկերտի շրջանը: Վճռական գործողութիւններու նախօրեակը կ'ապրէինք: Թրքութեան վերջնական եւ վճռական գրոհը ողորուած էր հայ ժողովուրդի կուրծքին, վերջին եւ մնացորդ օճախն ալ մարելու համար: Հայութեան կէսը, Արարատեան դաշտի եւ հայկական լեռներու մէջ, ոտքի վրայ, բացօդեայ կեանք մը կ'ապրէր, դամոկրիան սուրը կախուած իր գլխուն:

Վասպուրականի եւ Ալաշկերտի ժողովուրդը կը տեղաւորուէր Երեւանի եւ Էջմիածնի շրջաններու մէջ: Վասպուրականի զինուած ուժերը կը մնային Գնդ. Տիգրան Բաղդասարեանի (որու օգնականն էր խմբապետ Ասլանը) հրամանատարութեան տակ եւ կը դառնային կանոնաւոր զուեղ մը, կարուկով ժողովուրդական զանգուածներէն: Ալաշկերտի զինուած ուժերու մէկ մասը կը մնար ժողովուրդի հետ, միւս մասը կը միանար զանազան խումբերու: Այսպիսով, Ալաշկերտցիներու մեծ մասը գաղթականական առօրեայ կեանք մը կ'ապրէր:

Տարօնի նահանգի ժողովուրդն իր զինական եւ վարչական ամբողջութիւնը կը պահէր: Ան կը դառնար ինքնավար համայնք մը: Շատերն այդ հաւաքականութիւնն անուանեցին ալիքաթափակութիւն.ուրիշներն, համաձայն իրենց կրթութեան ու հասկացողութեան, ածական մը, գովեստի կամ անուանարկութեան, գտան ու տուին այդ ժողովուրդին: Բայց իրողութիւնը, որ պատմական նշանակութիւն մ'ունեցաւ, կը մնայ այն, որ այդ հաւաքականութիւնը յեղափոխական փորձութիւն, հաւաքական կամք եւ կարգապահութիւն ունէր. որ իր գործողութիւններով, ոչ միայն իր գոյութիւնը կրցաւ պահպանել, այլ ազգային ազատագրութեան ճանապարհին, ուղիղ գծի վրայ, իր տուրքը տուաւ, սիստեմաթիք եւ աննկուն հետեւողականութեամբ մը:

Ապրիլի վերջին շաբաթուն Անդրանիկ նամակներ գրած էր Տարօնի շրջանի զինուորական ղեկավարներուն եւ կը թելադրէր որ մեր բոլոր զինուած ուժերը կեդրոնացնենք Լոռիի լեռներուն եւ անտառներուն մէջ, ուր ինք ալ պիտի գտնուէր, եւ այդ տեղ կազմակերպենք զիմազրութիւն մը, հակառակ պարագային՝ կարող էինք անցնիլ Թիֆլիսի շրջանը: Խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ Սուրմալուի դաշտին մէջ, Արաքսի ափին: Այդ խորհրդակցութեան կը մասնակցէին Մուշի, Սասունի, Խնուսի եւ Մալազկերտի շրջաններու կուսակցական եւ զինուորական ղեկավարները: Խորհրդակցութիւնը եկաւ այն եզրակացութեան թէ Լոռին չէր կարող հանդիսանալ այն վայրը, ուր կրնայինք կեդրոնանալ, ապրիլ եւ կուրիլ: Լոռիի հայութիւնն աղքատ էր եւ լայն գործողութիւններու հնարաւորութիւններէ զուրկ: Հետեւաբար, բացասական պատասխան մը տրուեցաւ Անդրանիկին եւ հրաւէր եղաւ իրեն՝ միանալ մեր ուժերուն, գործել Արաքսիի եւ Երեւանի շրջաններուն մէջ. տեղահան ըլլալու պարագային՝ բռնել Ն. Բայազիտի բարձունքները, անցնիլ Զանգեզուր, ապա Ղարաբաղ եւ Գանձակ: Այս լայն սահմաններու մէջ կարելի էր ե'ւ գործ տեսնել, ե'ւ Ֆիզիքական գոյութիւնը պահպանել ոչ միայն զինեալ ուժերու, այլ նաեւ մեզ հետ շարժուող ժողովուրդական հոծ զանգուածին:

Անդրանիկ ուրիշ նամակով մը իր տեսակէտի վրայ պնդեց: Սմբատի, Հասարթի, Փլյուսի եւ այլոց ղեկավարութեամբ մէկ վաշտ զինուորներ Սուրմալուէն մեկնեցան դէպի Ալաշկերտ եւ միացան Անդրանիկին: Սակայն Տարօնի զինուորական եւ ժողովուրդական մեծագոյն զանգուածը մնաց եւ շարունակեց նախօրօք գծուած ճանապարհը:

Այս բաժանումները կը տկարացնէին Տաճկահայութեան տարերային ուժը: Միւս կողմէ ռուսահայութիւնը բոլորովին անպատրաստ էր օգտագործելու գայն: Ժողովուրդն ու ղեկավար մտաւորականութիւնը, բացի մէկ քանի կարկառուն ղեմքերէն, տակաւին ռուսական մեծ յեղափոխութեան մթնոլորտի ազդեցութեան տակն էին եւ չէին կրնար ըմբռնել այն ցեղայինըզածան կուրի, որ բացուած էր հայուն եւ թուրքին միջեւ: Հայ ժողովուրդն մտաւորականութիւնը, կամազուրկ հանրատութեամբ մը, կամ ազգամիջեան խաղաղութեան սին յոյսերով, կը դիտէին թուրք-թաթարական շրջաններու ջլատիչ գործողութիւնները, եւ սարսափած պատերազմական ճակատի հարուածներէն, ներողամիտ ու շոյող ընթացք մը բռնած էին ներքին թշնամիին դէմ, որ աւելի վնասաւոր էր, քան Արաքսի եկած թուրքը: Թաթարները Բորչալուի մէջ, դուրսէն իր ստորտանները, Զանգի Բասարի եւ Բոյիւք Վէտիի սահմաններու վրայ՝ անընդհատ կը կտրէին երկաթուղու հաղորդակցութիւնը, կը վտանգէին մեր զինուորական գործողութիւնները եւ պատառ պատառ կ'ընէին մեր փոքրիկ հայրենիքի ամբողջութիւնը: Ներքին անապահով մեր մէջքը կը կտրէր. իսկ հայութիւնը յեղափոխութեան ընդհանուր մթնոլորտին մէջ անվճռականագործած էր: Այս հոգեբանութեամբ, Արարատեան հայութեան ազգային իշխանութեան ղեկավարներու մեծ մասը եւ տեղական խաղաղ հայ ազգաբնակչութիւնը ջանքեր կը թափէին հանդարտեցնելու տաճկահայ գաղթականութիւնը եւ կը նախընտրէին ունենալ գաղթականներու առջեւ սպասող հնազանդ ժողովուրդ մը, քան այն զինուած բազմութիւնը, որ անզուսպ էր եւ զէնքով իր գոյութիւնը կը պահպանէր:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

15) Գոստի Համբարձումեանը սպանուեցաւ այդ գաղթաշարժին, Պարսկաստանի սահմանին վրայ, թրքական բանակի հետ տեղի ունեցած բախումի մը պարագային:



91 Pavstos Buzand Street, Yerevan, Armenia

Tel.: +374 93 588885, +374 60 488884

Mail: info@babylon.am

Website: www.babylon.am

  [Babylon.armenia](https://www.facebook.com/Babylon.armenia)

CASSANDRA HEALTH CENTRE

Approved **I.D.A. CASSANDRA PHARMACY**

CASSANDRA CLINIC
WALK-IN & FAMILY PRACTICE
416.331.9111

